և պաղաքերը լինիցիք , և պատուն ձեր կացցէ :

Երումն օրինաց սէր է :

Եւ ժողվուրդն ակն ունեք Զաքարիայ :

Վայուհետեւ վտանգեցաւ աղջ Քրիստոնէից :

Հինգ յաժ երկուց դանգաց վաճառի :

Ո՞րտ զբանս քննեն , և սիմ զկերակուրս Ճաշակեն :

Ճանաչեն 1 . Եթէ տէր բային եղակի ձայնով յոգնակի նշանակութիւն ունեցող բառ մ'է , բայը կրնայ յոգնակի ալ դրուիլ . ինչպէս ,

Եւ ժաղավորդն ակն ունեք Զաքարիայ , և պարհանային ընդ յամելն նորա :

Աշխարհ մի ասլուտամբ առ իս զի՞նչ պատգամ ցշեն :

Հինգն ի նոցանէ յիմարք էին :

Ճանաչեն 2 . Եթէ տէր բային անեղական ահօնն է , բայը կրնայ  
եղակի ալ դրուիլ . ինչպէս ,

Արտասուքն զգաւնութիւն սրտի Ճշմարդկ :

Կեսնեք իմ ի զժոխս մերժեցաւ :

## Դ Ա Ս Կ Բ .

155 . Կանոն Բ . Երբ այլ և այլ դեմքով տէր բային  
ներ ըլլան , բայը նախապատիւ դեմքով կը դրուի և  
սովորաբար յոգնակի : Վայ դէմքը երկրորդէն նա-  
խապատիւ է , և երկրորդն ալ երրորդէն . ինչպէս ,

Ես և դու և ամենայն բազմութիւնդ աշակերտեայուք  
աստուածային դրոց :

Կեցյուք և մի մեցյուք և մեք և դու և ստացուածք  
մեք :

Յորժամ դու և նա միայն իցեք :

Դու և որդիքդ պատուեցիք :

Ճանաչեն 1 . Երբեմն ալ բայը եղակի կը դրուի , դարձեալ նախա-  
պատիւ դեմքով . ինչպէս ,

Ես և տուն իմ պալպէմ դրեք :

Առաջ գու և երկրին բարեկամք ըստ , զի ոչ խօսեցարուք առաջի իմ  
Ճշմարիտ :

156. Կանոն գ. . Ես դեմքով շատ տէր բայիներ ար  
ըլլան , բայը սովորաբար յոգնակի կը դրուի . ինչպէս ,  
Հայր իմ և մայր իմ Եռողին զիս :

Դողումն և սոսկումն պատահեցին ինձ :

Եւ Արդրակ , Վիսաք և Աքեթժնակովի միջոյ հրոյն :  
Կուտէին ոմն վէմ , ոմն քար , ոմն աղիւս , ոմն զմայր  
փայտն , աղապրասպէին իննդալից փութով :

Ճանօլութիւն . Երբեմն ալ բայը եղակի կը նայ դրուիլ , ինչպէս ,  
Հանդերձ մարդոյ և ծաղր երեսաց և քայլ ոտից պափմէ զնմանէ :  
Կէրտա սա և նա և որդիք նորա :

Խոհարհեցաւ թագաւորն և ամենայն քահանացքն և երկիրագակին :

### Դ Ա Ս ԿԹ.

157. Կանոն գ. . Կնորիշ և անցեալ դերբայներուն  
տէրբային սովորաբար սեռական կը դրուի , թէ և  
դիմաւոր բայի հետ ալ ըլլան . ինչպէս ,

Ի մտանել ոսկոյն՝ հեղձաւ Ճշմարտութիւնն . ի մը  
տանել կաշտացն՝ ելին իրաւունքն :

Ի ժողովել Պատղոսի խուիւ ինչքաղում և դնել ի վե-  
րայ խարուկին :

Եւ նորա թօթափեալ զգաղանն ի հուրն :

Տեսեալ արդարոց ծիծաղեցան :

Օ Կաստուած ուրուց երբէք չիք տեսեալ :

Ճանօլութիւն . Քիչ տեղ ալ ուղղական կը դրուի երկու դերբայնե-  
րուն ալ տէրբային . ինչպէս ,

Մի ևս լինել ի սմա բնակիւ :

Մտեալ Յովեկի ի տունն գործել զգործ ինչ իւր :

Եղեւ բանալ երկնից և իջանել հոգւոյն սրբոյ և զալ Յայն յերկնից :

158. Գիտելք Ա. Կնորիշ դերբային , մանաւանդ  
ուղղականին տէրբային եթէ դերանուն ըլլայ , սրա-  
կան կը դրուի . ինչպէս ,

Երթալ անցանել ինչ յաշխարհ իմ :

Տեսանել ինչ զվոյելքութիւնն տէտոն :

Ոչ կամիմք թաղաւորել դժո ի վերայ մեր :

159. Գիտելքս ը. Անցեալ դերբայը՝ էական բային  
է, էր, իցէ եղակի երրորդ դեմքերուն հետ (120),  
շատ անգամ սեռական կ'առնէ ամեն դեմքի տերբա-  
յին եղակին և յոդնակին. ինչպէս,

Սիրեալ է իմ,	ժոխանակ ըսելո-	Սիրեալ եմ ես.
Սիրեալ է քո,	"	Սիրեալ ես դու.
Սիրեալ է նորա,	"	Սիրեալ է նա.
Սիրեալ է մեր,	"	Սիրեալ եմք մեք.
Սիրեալ է ձեր,	"	Սիրեալ էք դուք.
Սիրեալ է նոցա,	"	Սիրեալ են նոքա.
Սիրեալ էր իմ,	ժոխանակ ըսելո-	Սիրեալ էի ես.
Սիրեալ էր քո,	"	Սիրեալ էիր դու.
ևայլն.		ևայլն.

Սիրեալ իցէ իմ,	ժոխանակ ըսելո-	Սիրեալ իցեմ ես.
Սիրեալ իցէ քո,	"	Սիրեալ իցես դու.

### 160. Ասանի ալ չք բային հետ.

Իմ չիք սիրեալ,	ժոխանակ ըսելո-	Ես չեմ սիրեալ.
Քո չիք սիրեալ,	"	Դու չես սիրեալ.

Ճանօնսաթիւն. Սեռական տէր բային և անցեալ դերբայն կամ էա-

կանը ետե առաջ կրնան դրուիլ: — Զ կամ ոչ մակրայով որ զրուցուի,  
սովորաբար էականն առաջ կըսուի. այսողես, Իմ չէ տեսեալ. Զե տես-  
եալ իմ:

### Դ Ա Ս Հ .

161. Գիտելքս գ. Անորիշ և անցեալ դերբային, նը-  
մանապէս էական բային եղակի երրորդ դեմքերովը  
դրուած անցեալ դերբային տէրբային շատ անգամ տէ-  
ղէն ինք իրեն կը հասկցուի. ինչպէս,

Օ արմացան ամենեքին, մինչեւ հծծել ընդ միմեանս  
և ասել. — այսինքն՝ հծծել նոցա:

Օ ինչ եղեալ է ի մոի ձերում վասն մեր՝ կատարե-  
ցէք. — այսինքն՝ եղեալ է ձեր:

Ո ինչչ ստեղծեալ էր դքեզ յորովայնի՝ գիտեմ ըդ-  
քեզ. — այսինքն՝ իմ ստեղծեալ էր:

Օքնէ ունիս, զոր ոչ իցէ առեալ . — այսինքն՝ ոչ  
իցէ քո առեալ :

162. Գիտելէ՞ Դ. Շատ անդամալ բայը, մանաւանդ էական բայը ամեննեին չըրուիր ու տեղէն կ'իմացուի . ինչպէս ,

Ուր կաւ և դու ստեղծիչ մեր . — այսինքն՝ մեր կաւ եմք դու ստեղծիչ ես :

Այսօր մաքուր հսկեկիր, վաղիւ մոլի խելագար . — այսինքն՝ այսօր եմ, վաղիւ լինիմ :

Դոհութիւն երեքսրբենին . — այսինքն՝ դոհութիւն լիցի, մատուսցի :

Ոուր ի վերայ քաղդեացւոցն . — այսինքն՝ սուր լիցի,  
հասցէ :

Վայ զիս . — այսինքն՝ վայ ասելի է, համարելի է զիս :

### Գ Լ Ա Խ Ի Ը .

## Խ Ն Դ Գ Ի Ր Ե Խ Խ Ն Դ Գ Բ Ա Ր Ա Խ

### Դ Ա Ս Հ Ա .

163. Խնդիր կ'ըսուի այն բառը որ խնդրառուին նշանակութիւնը կ'որոշէ կամ կ'ամբողջացնէ :

Ինչպէս , Աստուած ստեղծ զարարածս ամենայն յոչնչէ . — հոս զարարածս ամենայն և յոշնչ բառերը՝ սպեղծ խնդրառուին նշանակութիւնը որոշեցին կամ ամբողջացուցին : Ասպուած սպեղծ խօսքին մէջ սպեղծը ինքնին անորոշէ . զարարածս ամենայն և յոշնչ բառերը ինչ և որմէ ստեղծած ըլլալը ցուցնելով՝ խօսքին աւելի որոշու ամբողջ խմաստ մը տուին : Ուստի սպեղծը ը հոս խընդրառուէ , զարարածս ամենայն և յոշնչ բառերը խնդիր :

164. Խնդիրը երկու կերպ է , Աեռի խնդիր և Ռնութեան խնդիր :

165. Աեռի խնդիրը գործողութեան առարկայ եւ զած բանն է : Ինչպէս վերի օրինակին մէջ զարարածս ա-

ՅԵԿԱՅՆ քառը սեռի խնդիր է առեղջ քային : ԱԿԱՅՆ ՆԵՐ-  
ԴՈՒԾԱԿԱՆ քայերը սեռի խնդիր կ'առնուն :

166. ԽՆՈՒԾԵԱՆ խնդիր են այլ և այլ նախդիրնե-  
րով կամ նախադրութիւններով և կամ առանց նախդրի  
ու նախադրութեան հոլոված կամ չհոլոված քառեր :  
Խնչպէս վերի օրինակին մէջ յուշնէ քառը բնութեան  
խնդիր է առեղջ քային :

### Դ Ա Ս ՀԲ .

#### 1. ԱՅԵՒԴԻ ԽԱՐԴԻՐ

167. Կանոն Ա. Խնչպէս վերն ըստնք , ներգործական  
քայերը հայցական հոլով սեռի խնդիր կ'առնուն , որ կը  
պատասխանէ զ՞ն կամ ի՞նչ բանը հարցման . ինչպէս ,  
Պարտիմք սիրել զմիմեան :

Հարց . զմիմ սիրել . — Պատասխան . զմիմեան . սեռի խնդիր է :

ԱՐՁԻՆ յամարայնի պատրաստէ զիերակու :

Հարց . ի՞նչ բան պատրաստէ . — Պատասխան . զկերակուր , սեռի խնդիր է :

Այրեսցես զբէր Ապուած առ յամենայն սրտէ քումին :

Այրեցէր զննամիս ձեր , քարի արարէք ատելեաց ձե-  
րոց :

Երկինք պատմեն զիտոս Աստուծոյ :

Վնդամն անգոսնէ զնրափ հօր :

168. Կանոն Բ. Այս հայցականին վրայ վնախդիրը  
չդրուելով , անորիշ կամ անհանդիր հայցական կըսուի ,  
երբ որոշեալ քան չցուցնէ . այսինքն՝ դիմորոշ յօդ-  
կամ յատկացուցիչ չունենայ , կամ յատուի անուն չը-  
լայ և ոչ ալ դերանուն կամ ուրիշ որոշիչ ածական ա-  
նուն . ինչպէս ,

Որի՛ խաղաղերէ :

Վուեալ հայ գոհայաւ եքեկ և ետ նոցա :

Վինեաց իւր պոտն : Վինեաց զառւն իւր :

Չըսուիր , տեսի հայր իմ , այր ոմն , Ամարկոս , նա .  
այլ պիտի ըսուի տեսի զհայր իմ , զայր ոմն , զլամարկոս ,  
զնա :

169. Գիտելէ . ԱԵՐԳՈՐԾԱԿԱՆ քայերուն սեռի խնդիրը կատորական քայերուն մէջ տեր քայի կ'ըլլան . ի.

ներգործականին տէր բային կրաւորականին առջև սովորաբար բացառական հոլովով խնդիր կ'ըլլայ : Ինչպէս սա օրինակին մէջ կը տեսնուի :

Յովհաննէս մկրտեաց զՅիսուս .

Յիսուս մկրտեցաւ ի Յովհաննէ :

### ԴԱՍ ՀԳ .

#### 2 . Ի՞նունեան ինդիր

170 . Ի՞նութեան խնդիրն այլ և այլ հարցումներու կը սկատասխանէ . որոնք ինչպէս ըստնք (166) այլ և այլ հոլովներով կամ նախադրութեամբ կը բացատրըւին : — Խնդրառուներուն ի՞նչ հոլով կամ ի՞նչ նախադրութեամբ բնութեան խնդիր առնելլյաւէտ սովորութեամբ , այսինքն մատենադիրներ կարդալով կը սորվուի . մենք միայնքանի մը օրինակներ հոս կը դընենք :

#### 171 . Ո-ղղական հոլով

Կայարօպական է Աստուած :

Հարց . ի՞նչ է Աստուած . — Պատասխան . անկարօտական : Ի՞նչ է ի՞նչո՞ւն հարցումները եական բայերուն քով ուղղական խնդիր են :

Աշխարհ հայոց մեջ է և արժաւանդ :

Յանիալէ է նա քան զոսկի :

Բանիքո բարի են և դիմունք :

Կոչեսցես զանուն նորա ՅՅիսուս :

Հարց . ի՞նչ կոչեաց . — Պատասխան . Յիսուս . ուղղական խնդիր է :

Օնաւ Յիսուս , որ անուանեցաւ Քրիստոս :

Բժիշկը զշափաւոր կերակուրս Տայը առազդութեան ասացին :

(Օ) զնա Աստվածոր :

#### 172 . Ա-րական հոլով

Վաճառեցին զՅավակէփ չառն Շահեկանի :

Հարց . քանիի՞ վաճառեցին . — Պատասխան . քսան զահեկանի : Ծախելու և զնելու բայերը սովորաբար սեռական հոլով խնդիր կ'առնեն և քանիի՞ հարցման կը սկատասխանեն :

<sup>1</sup> Երբեմն ալ գործիական , բացառական , չնոր կամ ի նախադրիւ տրական հոլովներով կ'առնեն . ինչպէս , արծաթով ստանալ : Ստացայ ես զնոսա ի գնոց արծաթոյ : Վաճառէ զնոսա ի հայու յիսուս կամ ընդ յիսուս դահնիանի :

Վախճանեցաւ Յովսէմի ամաց հարիւր և պասանց :  
Հարց .քանի տարուան վախճանեցաւ .— Պատասխան .ամաց հարիւր  
և տասանց : Տարիք ցուցնող բառերն ալ սեռական հոլով խնդիր կ'ըլլան ,  
և նշանակութիւննին գոնի պարուան հարցման կը պատասխանէ :

Եստաւ յաթու հօր իւրոյ ամաց Երկոպասանից :  
Առն միոջ էին երկու որդիք :

Մարդ իւ եւնու պղայ ունէր .— Էտական բայերը սեռական հոլով խնդի-  
բով ունենալ կը նշանակէն :

Դովտոյ էր ոչխար և արջառ և անասուն :

### 173. Գործիտկան հոլով

Դովտեսցես զնոսա գուաղանաւ Երկալեւաւ :

Հարց .ի՞նչ բանով հովտեսցես .— Պատասխան .գաւաղանաւ Երկաթ-  
եաւ : Ի՞նչ բանով հարցման պատասխանը դործիտական հոլովէ :

Այլ ծուլութամբ անցուցին զկեանս , զղջացան .և  
արփասոսք և հառաջանօք պատմեցին ի շահ զկնի-  
եկելոցն :

Քրդամբ երեսաց քոց կերիցես զհաց քո :

Պունակ գունակ ծաղկով զարդարեալէ առ հասա-  
րակ ամենայն երկիր :

### 174. Հայցական հոլով

Եղեւ անձրեւ զշառատուն պիւ և զշառատուն գիշեր :

Հարց .որչափ ատեն եղեւ անձրեւ .— Պատասխան .զքառասուն տիւ-  
և զքառասուն գիշեր : Ճամանակ ցուցնող ամուսները հայցական բնու-  
թեան խնդիր կ'ըլլան , ու որչափ առեն հարցման կը պատասխանեն :

Ըսթեցաւ Յիսուս յաշխարհի զամս Երեսուն :

Օգիշերն ողջոյն աշխատեցաք և ոչինչ կալաք :

Խօղոս եղեւ ի Դամասկոս առուրս ինչ :

Փոքր մի ժամանակ ընդ ձեզ եմ :

175. Տեղ նշանակող բառերն ալ հայցական հոլով  
ընութեան խնդիր կ'ըլլան տրականի մոօք .ինչպէս ,

Լանց զանապափն միայն :

Դնայր զճանապարհն ուրախութեամբ :

Կալ ահիւ .և գողութեամբ զասփի կենցաղս :

176. Չափի ու ձեի անաւններն ալ հայցական կը-  
դրուին , փոխանակ տրականի կամ գործիտականի .ինչպէս ,

Երբուցանեւ զպարտեզն Երկերիւր սաֆոր ջուր .— սցո-

ինքն երկերիւր սափորով ջրոյ , իամ պարտիզին ար-  
բուցանել երկերիւր սափոր , և այլն :

Պարձրանալ հնդետասաան կանգուն . — այսինքն՝ ի  
հնդետասաան կանգուն , իամ հնդետասաան կանգնաւ =  
Օքարսն զիւ և զօրինակ Բաբելոնի շիներ . — այսինքն  
ձեռվ և օրինակաւ , իամ ի ձե և յօրինակ :

## 177. Ա ԵՐՋԱԿՈՂՎ ՊՐԱԿԻԱՆ

Որդիք , հնաղանդ լերուք ծնողաց յերոյ :

Հարց . որու հնաղանդ լերուք . — Պատասխան . ծնողաց : Որո՞ւ կամ  
ինչ բանի հարցման կը պատասխանէ վերջահոլով տրականը :

Փոխ տայ Ասպո-ծոյ , որ ողորմի պնանիին :

Օկարիս ընկերին՝ անյանց համարեսցուք :

Այսպէս կ'ըսուի , խոստովանելքահանային . պատ-  
մելեղքօրն . հրամայել ծառային , հատուցանել տեաւն :

178. Յաղթեմ, Պաշտպանեմ բայերը հասարակօ-  
րէն հայցականի տեղ վերջահոլով տրական խնդիր կ'առ-  
նուն . նոյնպէս լսեմ բայն ալ , երբ միտ դնել , մակի ընել  
կը նշանակէ . ինչպէս ,

Այս ամենայնի յաղթէ , ամենայնի համբերէ :

Պաշտպանեաց իսրայել ծառայի իւրում :

Լուր , որդեակ , իրապո- հօր քո :

Այսպէս կ'ըսուի նաև ,

Անիծանել այլոց . — ըսել կ'ըլլայ անէծն իարտալ ու ըն-  
ներուն :

Հովուել հօտի . — հովուութիւն ընել :

Օգալցաւոց . — զիայուն ըլլալ . և այլն :

## 179. Ա ԱԽՏՐԻ- ՊՐԱԿԻԱՆ

Ամենայն ուղիսք ի ծով գնան , և ծով ոչ լնու :

Հարց . ու՞ր գնան ուղիսք . Պատասխան . ի ծով : Երբ բայը մէկ տեղոց  
մէկաղ տեղ շարժում կը նշանակէ , ու կը հարցուի ո՞ր . ասանկներուն առ-  
վորաբար նախդրիւ տրական կը դրուի :

Լոյ Յակոբ յիշիպու :

Հայեցարուք ի շուշանն վայրենի :

Այսպէս կ'ըսուի նաև , մտանել ի նաւ , ի բաղաք , ի պուն :

Արկանել ի հնոց , ի ծով . հանել ի շամաք . հայել յերկինս :

Ելանել ի լեռնան . փախչել յանապափ . և այլն :

## 180. Բայցառական հոլով

Ամբարտաւանութիւն յերկնից ընկեց զհրեշտական ։  
Հարց . ուսկից ընկեց . — Պատասխան . յերկնից : Ո՞սկից կամ ի՞նչ  
անէն հարցման կը պատասխանէ բացառական հոլով :

Օոր ինչ խնդրիցէք ի հօրէ իմմեյանուն իմ, տացէ ձեզ :  
Սրբեացուք զմեղուս մեր ի բարորի բանից, ի բամբասա-  
նաց, և ի սպախօսութենէ :

Երիւնն Յիսուսի սրբեացէ զմեղ յամենացն մեղաց :

## Դ Ա Ս Հ Յ .

181. Գիտելէս Ա . Ըատ բայեր իրենց արմատը,  
կամ արմատին մօտ նշանակութիւն ունեցող անուն-  
ները, և կամ յարաբերական ո՛ր ը՝ որ զանոնք կը յարա-  
բերէ, հայցական հոլովով խնդիր կ'առնուն, որ գոր-  
ծիական կ'իմացուի . ինչպէս,

Օժ սէր սիրեցին զՅիսուս . — այսինքն՝ միով սիրով :  
Օհարուածս թշնամոյ հարի զբեզ :

Երկնչելերիւն մեծ . — այսինքն՝ երկիւղիւ մեծաւ :  
Վառեցաւ ամենայն այր շնչն իւր . — այսինքն՝ զինե-  
ցաւ զինու իւրով :

Մեռանել զատիաբենական մակն :

Տեսէ ես զնեղութիւնն՝ զոր նեղեն զնոսա եղիպատ-  
ցիքն . — այսինքն՝ որով :

Գիտես զծառայութիւնն զոր ծառայեցի քեզ :

182. Գիտելէս Բ . Չափի ու կշիռքի անունները  
խնդիր կ'ըլլան ուղղական կամ անորիշ հայցական,  
գործիական, բացառական . ինչպէս,

Կոնկը զբարձրութիւնն պատն կանգուն, կամ պատն կանգ-  
նաւ, կամ ի պատն կանգնոյ :

183. Գիտելէս Գ . Երբեմն հայցական դրուած բառ  
մը ուրիշ հոլովի նշանակութիւն կ'ունենաց . ինչպէս,  
Հարցից և ես զնեղբան մի . — այսինքն՝ ձեզ բան մի,  
կամ զձեզ բանիւ միով :

Ուսուցաներ զնոսա բազում ինչ . — այսինքն՝ նոյա :

Օայս միայն աղաչեացուք զկատուած . — այսինքն՝ առ-  
այս կամ այսու :

Օ. կը մարմնոց նոցա ոսկի տունութեա . — այսինքն՝ ի կը իւ կամ կը ուլ:

### Դ Ա Ս ՀԵ .

184. Այնչեւ հիմա տուած օրինակներնուս մէջ խնդրառուները միայն բայերն էին . բայց գոյական ու ածական անուններ ալ կան , որ իրենց նշանակութեան համեմատ այլ և այլ հոլովով խնդիր կ'առնուն . ինչպէս , Օնունդ ի կուսէն . — հոս՝ ի կոսէն բացառական խնդիր է ծնունդ գոյականին :

Արժանի պատճոյ . — հոս պատճոյ արական խնդիր է արժանի ածականին :

Այսպէս են հետեւեալ օրինակները :

Մուտ յաշխարհ : Ելք ի մարմնոյ : Խառն ի ջրոյ և ի հողոյ :

Կնտես աշաց կամ յաշաց : Վեճն ի ձեւջ : Ամենօրհնեալ ի կանայս :

185. Գիտելիք Ա. Բաղդառական խօսքերու մէջ ածականները չոն նախադրութեամբ հայցական հոլով խնդիր կ'առնուն . ինչպէս ,

Գեղեցկագոյն քան զսիրամարդ :

Խմաստութիւն պատուականագոյն է քան զականս պատուականս :

Աչքն կարեւոր է քան զամենայն անդամս :

Ոչ է աշակերտ լաւ քան զվարդապետ իւր :

Վեծ է սէրն Աստուծոյ քան զամենայն մեծութիւն երկրաւոր :

186. Գիտելիք Բ. Թիւ ցուցնող և ո՞ն , ո՞ն , ի՞ն , ի՞ն , ո՞վ , և ուրիշ քանի մը անուններ սովորաբար բացառական խնդիր կ'առնուն . ինչպէս ,

Արձակեաց երկուս յաշակերպացն իւրոյ :

Իր աշակերպներն երիութը արյունեց :

Ո՞ն ի յեւջ . — յեւջն մէկ :

Օ՞ն յարարածոյս այնպէս պատուեաց Աստուծ :

Պատասխանի ետուն նմա ոմանիք ի բարաց :

Գ Լ Ո Ւ Խ Գ .

# Յ Ա Տ Կ Ա Ց Ո Ւ Ց Ի 2

ԵՒ

# Յ Ա Տ Կ Ա Ց Ե Ա 1 .

Դ Ա Ս Հ Զ .

187 . Յատկացուցիչ կ'ըստի այն սեռական անունը , որ մէկ ուրիշ անուան որո՞ւն ըլլալը , կամ անոր ոլատշաճիլը կը յայտնէ . ուստի մէկալբառն ալ կ'ըստի յափայեալ :

Ինչպէս , հարուած բառին՝ որո՞ւն հարուածն ըլլալն եթէ խմացնել ուղեմ , քովը սեռական անուն մը կը դընեմ այսպէս , հարուած սրոյ , սուրի հարուած , ու ըով կ'խմացուի թէ հարուածը՝ սուրի հարուած է . հոս՝ հարուած յատկացեալ եղաւ , սրոյ յատկացուցիչ :

188 . Կանոն Ա . Յատկացուցիչը սովորաբար յատկացեալէն ետքը կը դրուի , աշխարհաբառին ու տաճկերէնին ներհակ . ինչպէս ,

Ընդդամն անգոսնէ զիսրատ հօր :

Հարց . որո՞ւն խրատը . — Պատասխան . հօր , յատկացուցիչ է խըստին :

(Օրհնութիւն հօր հաստատէ զտուն որդույ , և անէծք հօր խախտեն ի հիմանէ :

Որ զբեռն ընկերին բառնայ , կատարէ զօրէնսն Բլինդոսի :

Խոնարհութիւնն աղբիւր խողաղութան է , և վտակը շնորհան ելանեն ի նմանէ :

Հեղմամք արեան խրեանց նորոգեցին՝ զաշխարհս :

Օհաց մէր հանապաղորդ տուր մեղ այսօր :

189 . Կանոն Բ . Յատկացուցիչը կընայ յատկացեալէն առաջալ դրուիլ . ինչպէս ,

Առանց բարեգործիուլ հրամանաց ակնարկութեան . — այսինքն՝ առանց ակնարկութեան հրամանաց բարեգործիուլ :

Կրտսեր որդւոյն Յաղկերտի դայեակն . — այսինքն՝  
դայեակն կրտսեր որդւոյն Յաղկերտի :

190. Գիտելիք Ա. Յատկացեալը նոյն խօսքի մէջ  
շատ անդամ չկը կնուիր , այլ ինք իրեն կ'իմացուի . ինչ  
պէս ,

Եստուծոյ բարբառ և և մարդոյ . — այսինքն՝ ոչ  
բարբառ մարդոյ :

Հրեշտակի կարծեցին զաստածային բարբառն  
զայն :

Ժանիք նորա՝ կորեան առիւծու . — այսինքն՝ ժանիք  
նորա էին ժանիք կորեան առիւծու :

191. Գիտելիք Բ. Յատկացուցչի պէս շատ անդամ  
գոյական անուն մը կը դըռւի սեռական հոլով՝ ածու-  
կանի տեղ . ինչպէս ,

Կնօթ ընտրութեան . — այսինքն՝ անօթ ընտիր :  
Խօսել բանս դառնութեան :

Ապասք ոսկւոյ և արծաթոյ . — այսինքն՝ ոսկեղէն և  
արծաթեղէն :

## Դ Լ Ո Ւ Խ Դ .

# Բ Ե Ց Ե Յ Ե Տ Տ Զ

Ե Կ

# Բ Ե Ց Ե Յ Ե Տ Տ Զ Ե Ը Ը

Դ Ա Ս Հ Ե .

192. Կնունի մը կամ դերանունի մը ինչ կամ ով  
ըլլալը , կամ ինչ մաօք առնուած ըլլալը յայտնել ու-  
զենք , քովը ուրիշ անուն մը կամ դերանուն մը կը դր-  
նենք , որ բացայայիշ կ'ըսուի , և միւսն ալ բացայայիտեալ :

Ինչպէս , Եշտ սպարապետ . հոս՝ սպարապետ եւ  
բացայայտէ թէ Եշտ սպարապետն է : Խոկ թէ որ  
ըսեմ ; Սպարապետն Եշտ . հոս՝ Եշտ կը բացայայտէ  
այն սպարապետը , որուն անունը Եշտ է :

193. Ապեռն . Բացայայտիքը թուով ու հոլովով համաձայն կը դրուի բացայայտելոյն . և երկուքին մէջ զօրութեամբ մեկնական բառ մը այսինքն , այս է , ասեմ , իմաւայլն կ'իմացուի , որոնք երբեմն ներգործութեամբ ալ կը դրուին . ահա երկու կերպին ալ խառն օրինակ ները .

Ինա հաւատասցեն , այսինքն ի Յիսոս - Քրիստոս = Նրաշալի պատուով յարգեալ , բանի - ասեմ և մատութամբ վարսից , այս է արդատին Դիմօք բարեշուք կերպից :

Թողեալի բաց զիառսն հայրենի՝ ղտահանացութիւն : Օգլուխ ամենայն առաքինութեանց զնուն բովանդակեալ ունի ողորմութիւնն :

Մեօք քարոզեցաւ , ինեւ և Ալղանոսիւ - և Տիմոթէիս : Ենանիա հանդերձ կնաւ իւրով Յափրաս լաճառեաց ադարակ :

194. Պիտելէս Ա . Տեղերու անուններն թէոր վերը դրուելու ըլլան , ընդհանրապէս կը համաձայնին միշտ : Իսկ թէոր աճականի պէս յառաջ դրուելու ըլլան , շատ անդամ անհամաձայն կը դրուին ուղղական . ինչպէս ,

Իծովանալ Անելու գետոյ : Ի Ախոն լեռնեւ : Առ Եղագակ գետով : ՅԱՀԱՐԴԱԿ գաւառէ :

Ճանօնութիւն . Երբեմն ալ համաձայն կ'ըւլան . ինչպէս ,

Ի Սիսնէ լեռնէ . Սէտարու-Դայ քաղաքի : ՅԱՌԱՋՈՒՆՈյ գետոյ :

195. Պիտելէս Բ . Մարդու անունները թէ որ նախադաս ալ դրուին , հասարակօրէն կը համաձայնին . ինչպէս ,

Ի Տրայիանոսէ արքայէ : ԼՂԵՆՎՈՐԱՓՐԱ - գստերբն հանդերձ : Ի Դարեհէ արքայէ :

Ճանօնութիւն . Քիշ անդամ ալ կրնայ նաև շհամաձայնիլ . ինչպէս ,

ՅԱԳՈԽԱՓԻՆ կայսերէ : Աւեհն տիկնաւ : Յուլիոս կայսեր :

Գ. Ա. ՈՒ Խ. Ե.

ԵՇԱԿԱՆ, ԵՒ Գ. ԱՅՅԱԿԱՆ,

Դ Ա Ս Հ Ը.

196. ԵՇԱԿԱՆ (9) կ'ըսուին որակութիւն կամ չափ ցուցնող բառերը, որ գոյականի մը վրայ կը զրուցուին:

197. ԵՇԱԿԱՆ անունը աշխարհաբառի մէջ առաջ ետեւ ալ կը դրուի. գրաբառի մէջ առաջ ալ ետեւ ալ կը դրուի մէջ պարտէղ. կամ պարտէղ մէջ:

198. Լանոն Ա. ԵՇԱԿԱՆՆԵՐԸ երբ գոյականէ նախադաս ըլլան, սովորաբար չեն համաձայնիր անոնց հետ. այլ միայն նախդրիւ կը հոլովին, այօինքն գոյականին նախդիրը իրենիք կ'առնուն. ինչպէս,

Խառարին բանտ, խառարին բանտի, խառարին բանտիւ, զետարին բանտ, ի խառարին բանտ, ի խառարին բանտէ. Խառարին բանտք, խառարին բանտից, խառարին բանտիւք, զետարին բանտս, ի խառարին բանտս, ի խառարին բանտից:

Ուրախարար բաժակաւն զուարձացոց զմեղ:

Ջամանակէայ վշտօքս զանժամանակէայ երանութիւնն ժառանդեսցուք:

Եղանական պսակաց արժանի եղեն:

199. Լանոն Բ. Եայց շատ անգամ նախադաս ածականը կրնայ համաձայնիլ. ինչպէս,

ԵՇԱԿԱՆ ուրախութեամք: Եկեղեց ամբարշտութեան:

Փոխեցին զիւառս անեղջին Եստուծոյ ինմանութիւնն պառկերի եղծանելի մարդոյ:

Խոստովան լիցուք զգաղանիս սրախց մերոց ծածկագիտին Եստուծոյ:

200. Կիտելլս. Կայնապէս կը համաձայնի նախադաս ածականը, եթէ իր ու գոյականին մէջ ուրիշ մասն բանի մանէ. ինչպէս,

Երինառին վերակաչեաց հրաման արքային:

Երէլ ի հարազատէն իւրմէ սպանանի յեղբօրէն:

Հըշտառագունիս պարտ եր անցանել բանի:

Փախուցելոյ ի բարկութենէ եղածորն առաջնորդեաց  
արդարոյն :

Ծնարեցէք վիայեալ ի ձենջ արս եօթն :

Խաղումն , բազմաբերս , և գիւնեբերս ի նմա անկեաց հովիտս :

201 . Առնոն զ . Իսկ թէ որ հասարակ անուն ածա-  
կանը յետադաս ըլլայ իր գոյականէն , ասոր հետ կը  
համաձայնի ու մեկտեղ կը հոլովի . ինչպէս ,

Եւ իմասպուն , առն իմասպուն , արամք իմասպուն , զայր  
իմասպուն , յայր իմասպուն , յառնէ իմասպուն . Եւ իմասպունք ,  
արանց իմասպուն , արամքը իմասպունք , զարս իմասպուն ,  
յարս իմասպուն , յարանց իմասպուն :

Վմանեցաք մեք մարդոյ անձոի :

Ըթունէք իմասպունք հաստատեն զմկայութիւն :

Ո՞ի պատաղեսցուք հոգովք անցառոչ :

202 . Կիրելէք . Երբեմն անհամաձայն ալ կրնան  
դրուիլ յետադաս կարդ մը ածականներ . մանաւանդ  
անցեալ դերբայն (122) . ինչպէս ,

Վատանի գրոշմեալ աշովին հայրական :

Կարօւեալ մնայի դալստեան քս սո-րի :

Ասկեհուն հանդերձից ընդելուզուլ մարդարտով :

Եմերայ աշխարհիս Աասպուրական իուղեալ :

Եյստես կ'ըսուի նաև . Օօրէնո արքունի . Արամա-  
նաւ արքունի . Տանն արծունի . Օլանջօքն տէրունի .  
Պատկաւ փշեայ :

### Դ Ա Ս Հ Յ Ա Յ Ա

ՄԻ , ԵՐԻԱՆ , ԵՐԵՎԱՆ , ՄԱԿԱՐԵԱ ՀԱՇԱՅ . ԵՒԱՅՆ ԹԻՒ ՑԱՑՈՒ . ԵՒ ԱՄՆ . ՈՔ .

ԻՄՆ . ԻՆՉ . ԱՅՆ . ԵՎԵՆԱՅՆ ԱՃԱՎՆՆԵՐՈՒՆ ՀԵՄԵԶԵՅՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

ՄԱՅՆԱԿՈՐ ԳԻՏԵԼԻՔ :

203 . Ծմիւ ցուցազներէն միւնկակի ըլլալուն , Կզակի գոյական կ'ու-  
ղէ . և թէ նախադաս ու թէ յետադաս սովորաբար կը համաձայնի . ինչպէս ,

Մի այր , մոյ առն , մոն արամք , ի մոջէ առնէ ևայլն :

Այր մի , առն մոյ կամ մոջ , արամք մոջ , յառնէ մոջէ ևայլն :

204 . Երիսու , երեւ , լորէ անեղական ըլլալով , յոգնակի գոյական  
կ'ուղենի . և թէ նախադաս ու թէ յետադաս սովորաբար կը համաձայնին .  
ինչպէս ,

Երիսու աւորք , Երիսու աւորք , Երիսու աւորք , Աներիսու աւորք , յեր-  
իսու աւորք :

Աւուրք երիս , աւուրք երիս , յաւուրք երիս , և այլն :  
Երեւ վկայք , երեւ վկայից , երեւ վկայիւք , ուերեւ վկայու ,  
յերեւ վկայից :

**Վ**կայք երեւ . վկայից երեւ , վկայիւք երեւ , և այլն :

**Չ**որք քաղաքք , չորիշ քաղաքաց , և այլն : Քաղաքք չորք , քաղաքաց  
չորիշ , և այլն :

205 . Խոկ հինգեն սկսեալ ամենն ալ՝ ածականներուն կանոնին նման  
կը համաձայնին իրենց պոյտկաններուն հետ : Ծեկոր առաջ դրուին , սովո-  
րաբար նախորիւ կը հոլովին թէ եղակի և թէ յոգնակի . ինչպէս ,

Եօլն այր . Եօլն առն . Եօլն արամք , ուեօլն այր . Եօլն արք , Եօլն ա-  
րանց . Եօլն արամքք . ուեօլն արս , յեօլն արանց :

**Ս**ոյնպէս , Ուլ օր . ուլ աւուր . ուլ աւուրք , ուլ աւուրց , և այլն :

**Հ**աղար Եկեղեցի , հաղար Եկեղեցւոյ , հաղար Եկեղեցիք , հաղար Եկեղե-  
ցեաց . և այլն :

— Խոկ թէոր ետեւ դրուին , յոդնակի պոյտկան կ'ուղեն , ու մէկտեղ  
կը հոլովին բաց ի նախորիւ հոլովներէն . ինչպէս ,

**Ե**ղբարք հինգ (չըլլար հինգ) , Եղբարց հինգից , Եղբարքք հինգօտ . զեղ-  
բարս հինգ (չըլլար հինգ) , յեղբարս հինգ (չըլլար հինգ) , յեղբարց  
հինգից :

**Ս**ոյնպէս , Քորք Երիսուսան , քերց Երիսուսանից , և այլն :

Տունք հարիւր , տանց հարիւրոյ , և այլն : Եկեղեցիք հաղար , Եկեղեցեաց  
հաղարաց , և այլն :

## Դ Ա Ս Զ .

206 . Ո՞հ , ո՞ թէ որ խօռքի մէջ մինակ՝ բանելու ըլլան , պոյտկանի  
ոյժ կ'ունենան . բայց թէոր քովերնին քոյտկան ըլլայ , սովորաբար յետա-  
գաս ըլլալով կը համաձայնին + ինչպէս ,

**Ա**յր ոճն կամ ոժ , առն ռարուն կամ ռարուն : արամք ոմանք , զայր ոճն  
կամ ոժ , առն ռամեն կամ ռամեն , յառներ ռամենն կամ ռամենք : արք  
ոմանք , արանց ոմանց , արամքք ոմանքի , զարս ոմանս , յարս ոմանս ,  
յարանց ոմանց :

207 . Խճ կամ ինչ հասարակութէն անկենդան բաներու կ'ըսուի . թէոր  
մինակ բանելու ըլլայ , պոյտկան անսուան ոյժ կ'ունենայ , բայց թէոր քովե-  
ր քոյտկան ըլլայ , սովորաբար յետագաս ըլլալով կը համաձայնի . ինչպէս ,  
Պատճառ ինչ , պատճառի իրիք , պատճառաւ իրիք , ի պատճառէ  
իրիք , և այլն :

— Շատ անգամալ անհամաձոյն կը մնայ . ինչպէս ,

Ընդ պատենիւք ինչ . ոչ առ խմասութեան ինչ . յետ աւուրց ինչ :

— Երբեմն ինչ . ինչ զարդի տեղ կը դրուին . ինչպէս ,

**Միթէ դու մեծ ինչ ոք իցեռ քան զհայր մեր Աբրահամ :**

208 . Այն թէ որ նախորաս ըլլայ իր գոյականէն , սովորաբար կը  
համաձայնի բաց ի նախորիւ հոլովներէն . ինչպէս ,

**Ա**յն քաղաք , այն քաղաքի , այլու քաղաքաւ , յայն քաղաքէ , այն  
քաղաքք (չըսուիր այլ ժաղանք) , այլուք քաղաքք , յայն քաղաք (չըսուիր ույց ժաղանք) :

— Երբեմն առ նախորիւ կը հոլովի :

— Բայց թեոր յետադաս ըլլայ , ան ատեն հասարակօրէն կը հոմանայնի . ինչպէս ,

Քաղաք այլ . քաղաքի այլոյ , քաղաքաւ այլով , զքաղաք պայլ , ի քաղաքէ յալմէ . քաղաքք այլք , քաղաքաց այլոց , քաղաքօք այլովք , զքաղաքու պայլո . ի քաղաքոց յայլո . և այլն :

209 · Ա մէնայն՝ թեոր գոյականէն նախադաս ըլլայ , սովորաբար նախարիւ կը հոլովի . բայց թեոր յետադաս ըլլայ , սովորաբար եղակիին կը համաձայնի , իոկ նակիին թռւով չհամաձայնիր . ինչպէս ,

Այս ամենայն , առն ամենայնի , արտամբ ամենայնին . արք ամենայն , արանց ամենայնի , արտամբը ամենայնին , զարս ամենայն , և այլն :

## Դ Ա Ս Զ Ա .

ԱՃԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՅՆՑ ՀԱՄԱՉԵՑՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՑ ՄԸԾՆՅԱՌԻ ԳԻՏԵԼՈՒՔ

210 · Դերանուններէն ածական եղող այս , այդ , այն , եթէ զոյականէն նախադաս ըլլան , սովորաբար այսպէս կը համաձայնին .

Այս առւն , այսը տան , այսու տամբ , պայս տուն , այսմ տան , յայսմ տանէ .

Այս տունք . այսց տանց , այսուինք տամբք , պայս տունս , յայսց տանց :

— Իոկ եթէ զոյականէն յետադաս ըլլան , այսպէս կը համաձայնին սովորաբար .

Տունս այս , տանս այսուինք տամբս այսուինք . ի տանէս յայսմանէ . տունքս այսուինք , տանցս այսուինք , տամբքս այսուինք . ի տանցս յայսմանէ . և այլն :

211 · Առյն , դոյն , նոյն , ածական դերանունները հասարակօրէն իրենց գոյականէն առաջ կը դրուին , և կրնան երբեմն նախողիւ հոլովիլ , բայց աւելի վայելուշ է մէկտեղ հոլովիլը . ինչպէս :

Առյն մարմին , նորին մարմնոյ , նովին մարմնով , ի նին մարմնոյ . նոյն կամ նորին մարմննք , նովին մարմնոց , նովին կամ նովինին մարմնովք , ի նովին մարմնոց , և այլն :

212 · Իմ , ժո , ժոյ , մէր . յէր . իւր գերանունները հասարակօրէն իրենց գոյականէն ետքը դրուելով , անսոց հետ միշտ կը համաձայնին , բաց ի յոգնակի նախողիւ հոլովիններէն . ինչպէս ,

Եղբայր իմ , եղբօր իմոյ , եղբարբ իմու , եղբօր իմում , յեղբօրէ իմի .

Եղբարք իմ , եղբարց իմոյ , եղբարբք իմուն , զեղբարս իմ , և այլն :

— Ասոնք շատ անգամ նախադաս ալ դրուելով կը համաձայնին նոյնպէս , օրինակի համար .

Իմ հայր , իմոյ հօր , իմում հօր , իմոյ հարց , և այլն :

215 · Ու երբ նշանակէ առանք . և հարցնելով նշանակէ չի՞մ , հանիլ , ածական կ'ըլլայ և իր գոյականէն առաջ կը դրուի . և անոր հետ կը համաձայնի , բայց ի յոգնակի նախողիւ հոլովիններէն . ինչպէս ,

Որով հրով . յոր իւ արարշէ . որոց անտանոց :

Ու քաղաք , ուրո՞յ քաղաքի , ուրո՞վ քաղաքաւ , յորմէ՞ քաղաքէ . ուր՞ քաղաքք , ուրո՞ց քաղաքաց , ուրո՞վք քաղաքօք . ուր՞ քաղաքս , և այլն :

ԳՐԱԴԱՎՈՅՑ  
ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ

ԵԿ

ՅԱՐԱԲԵՐԵԱՆ

ԴԱՍ ԶԲ.

214. Յարաբերական գերանունը ո՞ր, զօրութիւնն  
մ'ունի ուրիշ անուն մը կամ գերանուն մը մէջ բերե-  
լու, որուն կը բռուի յարաբերելալ:

Ինչպէս, Ես ո՞ր խօսիմ. Դու ո՞ր լսես. Ես ո՞ր գոր-  
ծէ. Հոս՝ առաջինին մէջ ո՞վ կը յարաբերէ Եղիս, երկ-  
րորդին մէջ Դուն, երրորդին մէջ Նան: Ես ոյնպէս, ա-  
մենայն մարդ ո՞ր գործէ զշար, ատեաց զլոյս. Հոս՝ ո՞ր  
կը յարաբերէ Տարբը:

215. Կանոն Ա. Յարաբերականն իր յարաբերելոյն  
հետ թուով կը համաձայնի, ու բայն ի՞նչ հոլով որ  
պահանջէ, այն հօլովով կը գրուի. ինչպէս,

Տեղի՝ ո՞ր աւաղին է, յատակ և քաղցրահամ բղիւ-  
ղջուր:

Օսով մեծ է և անդորր, յորում են ձկուննք, որոց ոչ  
գոյ թիւ:

Յիշատակ հեղութեանն՝ որով զժամանակն ծախե-  
ցար, զմիտո խոցուել:

Հայ ոչ ունիս որով բուծանես զաղքատն. այլ լե-  
զու ունիս՝ որով զհոգեսրական հացն նմա քաղց-  
րացուցանես:

Այս մի էր յերուսաղէմ, որոյ անուն էր Այսմէնն:

216. Կանոն Բ. Ա երի օրինակներուն մէջ յայտնի  
կ'երեւայ որ, յարաբերականն իր յարաբերեալէն ետքը  
դրուած է. բայց շատ անդամ առաջ ալ կը գրուի.  
ինչպէս,

Աւր է ո՞ր ծնաւ արհայն հրեից. — այսինքն՝ ուր է  
արիքայն հրեից որ ծնաւ:

Ու ի ձեռն հրեշտակաց խօսեցաւ քանի հաստատուն  
եղեւ :

Եսի ո՞վ էր գլուխակ անօրէն գործոյն անդրէն ի դրան  
արքունի՝ նոյն հաղարապետն ԱՇՀՐՆԵՐՈՒՀ յառաջ  
մատուցեալ ասէ :

217. Գիտելիք Ա. Երբեմն յարաբերականին եղակին  
յոգնակիի տեղ կը գործածուի, մանաւանդ ուղղական  
ու հայցական հոլովիներով. ինչպէս,

Երանի այնոցիկ, ո՞ւ սուրբ են սրտիւք :

Օ գործոն, զը ես գործեմ:

Երբեւ լուան ո՞վ յերաւասղէմ առաքեալն էին :

Աւ բարւոք վերակացու լինին Երեցունչ կրկին պատ-  
ւոյ արժանի եղիցին :

218. Գիտելիք Բ. Եթէ յարաբերեալը դերանունը ըլ-  
լոյ, շատ անգամ զօրութեամբ կը դրուի. և յարաբե-  
րականն ալ երբեմն կրնայ անոր հոլովովը դրուիլ. ինչպէս,

Արուճ ինդրէ իքէն՝ տուր, և ո՞վ կամի փոխ աւնուլ  
իքէն՝ մի դարձուցաներ զերեսս. — այսինքն՝  
այնոր ինդրէ, և յայնմանէ որ կամի. առաջինին  
մեջ յարաբերեալին հոլովովը դրուած է յարա-  
բերականը, և երկրորդին մեջ իր պէտք եղած  
հոլովովը դրուեր է :

Դու ոչ մտանես, և զը մտանեն՝ ընդդէմ կացեալ  
արգելուս. — այսինքն՝ զնոսա որք մտանեն :

Դուք երկիրագանելք՝ որուճ ոչն գիտեք, մեք եր-  
կիրագանեմք որուճ գիտեմքն :

Վատեայ առ մի ոմն ո՞վ անդ կային. — սյսինքն՝ յայն-  
ցանէ որ անդ :

219. Գիտելիք Գ. Յարաբերական դերանունը էական  
բայով՝ ո՞ն, ո՞ի նշանակութիւն կ'ունենայ. աս էական  
այլ երբեմն ալ ներգործութեամբ չդրուիր. ինչպէս,  
Ի միոյ հօր որդիս՝ է ո՞վ հնաղանդ և հսկատակ է հօրն,  
և է ո՞վ չարագոյն քան զսատանայ. — այսինքն՝ ո-  
մանք հնաղանդ, և ոմանք չարագոյն քան զսա-  
տանայ :

Առղնոց զիսօշխւն միայն զմարդոյն առեալ, և ո՞ր ի  
ծակս, և ո՞ր իսորս, և և ո՞ր ընդ փապարս երկրի  
մտեալք զօղեն :

Յողովեցին, ո՞ր շատ, ո՞ր սակաւ . — այսինքն՝ էր որ  
շատ, և էր որ սակաւ :

Հանապաղ մեղանչեմք, ո՞ր խորհրդով, ո՞ր բանիւ,  
ո՞ր լսելով, ո՞ր տեսանելով :

220. Գիտելիք Դ. Ըատ անդամյարաբերական դե-  
րանունն ու բայը զօրութեամք կը գրուին . ինչպէս,  
Բողըոջ է առ Կատուած խաղաղութեան՝ առ եղ-  
բարսն խաղաղութիւն . — այսինքն՝ խաղաղու-  
թիւնն որ լինի առ եղբարս, է բողըոջ խաղաղու-  
թեան որ լինի առ Կատուած :

Փայտն զգործով մեղսն, և եղեգն զբանիւ յան-  
ցանսն ցուցանէ . — այսինքն՝ փայտն ցուցանէ  
զմեղսն՝ որ լինին գործով, և եղեգն զյանցանսն՝ որ  
լինին բանիւ :

### Գ Լ Ա Խ Խ Լ ։ Ն Ա Խ Պ Ի Բ

#### Գ Ա Ս Զ Գ ։

221. Կանոն . Եախտիրը յառաջ դրուողը կ'առնու,  
թէ յատկացուցիչ ըլլայ կամ յատկացեալ, թէ բացա-  
յայտեալ, թէ աճական ըլլայ կամ գոյական, և թէ  
անունէ մը առաջ իր խնդիրն կամ մակրայն ըլլայ . ինչպէս,  
Ա. Ծառաջ դրուած յատկացեալը կամ յատկացու-  
ցիչը նախդիր առած .

Որ զբեռն ընկերին բառնայ, կատարէ զօրէնսն  
Քրիստոսի :

Հ ուսոյն ճառագայթ տպաւորէր ի յինքեան :  
Բազմաժամանակեայ սովորութիւն զընութեան զօ-  
րութիւն առնու :

Փրկեցաւ յառիւծուցն բերանոյ :

Ա. ՅԱՌ ինչ ուրուք և առեալ իցէ :

Բ. Յառաջդրուած բացայայտեալը նախուիր առած .  
Կուաւու խաղաղութեանն Պրիստոս սիրով ի մեղ  
ընկալցուք :

Վ աճառեցին զՅովուէփ եղբայր իւրեանց :

Եկին առ Յակոբ հայրն իւրեանց :

Գ. Յառաջդրուած հասարակ ածականը կամ գոյա-  
կանը նախուիր առած .

Դ) Եծ թագաւորն :

Ա) Հեղիղ հաւատոց և ի սուրբ վարուց :

Յ Պատմուճան նորա ծաղկեայ :

Ն զգս մեծամեծս և հզօրագոյնս :

Է Արդոյ մեղաւորէ նենդաւորէ :

Դ. Լնունէ մը առաջդրուած ինդիրը կամ մակ-  
քայր անոր նախուիրն առած .

Օ գուշանալի կոոց զոհելոյ . այսինքն՝ ի զոհելոյ կոոց :  
Յ Ապինի գործոցն խոստացեալ վարձուց . — այսինքն՝

ի վարձուցն խոստացելոց առաքինի գործոց :

Ղ Առբ կիղեալն և շհողմով հոսեալն և զժանեօք  
դազանաց ծախեալն յարուցանես . — այսինքն՝ ըդ  
կիղեալն հուրբ , և այլն .

Ա Նդդէմ դառնալ նոցա :

Յ Յառաջագոյն ասացեալ պատգամս :

### Դ Ա Ս ԶԴ.

222. Դիտելք Ա. Ըստ անդամ նախուիրը ետև  
դրուածին վրայ ալ կը կրկնուի , մանաւանդ հեռու ին-  
կածին , թէ յատկացուցիչ ըլլայ կամ յատկացեալ , թէ  
բացայատիչ , թէ հասարակ ածական կամ գոյական ,  
և թէ իրմէ յառաջ նախուրով ինդիր կամ մակրայ ու-  
նեցող և բուն նախուրին տէր եղող անուն . ինչպէս ,

Ա. թէ յատկացեալին և թէ յատկացուցին վրայ  
նախուիրը կրկնուած .

Ո ի խոսորիցես զիրաւունս զեկին և լորոյ և զայրոյ :

Օ միտս կամեցաւ հաճել զամբոխին :

Օ ըստ բարեբարութեանդ զափ տւեալ :

Յովսէփ մեկնեաց զՓարաւոնի վերադն :  
Կախեաց զՆիկանովը պէլուին :

Բ. Յացայայտչին վրայ նախդիրը կրկնուած .  
Կոչեաց զորդի իւր զկրտսեր պՀակոբ :  
Կոչեաց զԱսաւ զօրդի իւր երէց :  
Անց նա ըստ գետն մեծ ըստ Եփրատ :

Գ. Թէ ածականին և թէ գոյականին վրայ նախդիրը կրկնուած .

Կոէ ցարսն ցյարուցեալս ի վերայ նորա :  
Դաի զոչխարս իմ շկորուսեալ :  
Շինեաց զդուռն տանն տեառն զբարձր :  
Ի բարձրաւանդակումն կուռ կալով ի տեղւոջ :  
Օկարի խոնարհագունիցնքուռն հարկանէ զօրինակաց :  
Դ. Յուն նախդրին աէր եղող անունին վրայ ալ  
նախդիրը կրկնուած .

Օգացուցանել մեղ զհոգւով չափ զսէրն :  
Օառ ի քեղ զաղաւինեալ և զյուսացեալ ժողովուր-  
դըս քո :

Օառ դարեհիւ զկոխւն :  
Ի միւսանգամ ի գալստեանն :  
Օամենեսեան զյաւաջագոյն զննչեցեալն :

### Դ Ա Ս ԶԵ .

223. Պիտելիս \* Բ. Յատկացեալը զօրութեամբ դըր-  
ուած ժամանակը (190) , նախդիրը յատկացուցիչը  
կ'առնու , սովորաբար դիմուշ յօդով մը (226) . ինչպէս ,  
Օարմանային յոյժ ընդ գեղեցկութիւն նորա և ընդ  
ամենայն որդւոցն Իսրայէլի . — այսինքն՝ և ընդ  
գեղեցկութիւն ամենայն որդւոցն :

Յիշեսցես զօր մահուն և զդատաստանին . — այսինքն  
և զօր դատաստանին :

Տգէտ են Աստուծոյ արդարութեանն , և զիւրեանցն  
խնդրեն կացուցանել . — այսինքն՝ զիւրեանց ար-  
դարութիւնն :

Վմենայն ծառասունկը ոչ երբէք փոխեն զգոյնս  
ծաղկանցն և զտէրեւոցն :

224. Գիտելիք զ. Երբ առջի բառն ետքինին խընդիր ըլլայ, և երկուքին ալ նոյն նախղիրը դնել որպէսոք ըլլայ, ետքինին հարկ չըլլար դնելու, առջինին նախղիրը երկուքին ալ կ'օգտէ . ինչպէս,

Ի՞րիստոսէ պարզեեալ փառմն վայելոցուք . — փոխանակ ըսելու՝ ի փառմն պարզեեալ ի՞րիստոսէ :

Օձեռամբ անկեալն իւրեանց՝ բռնութեամբ ժողովեն . — փոխանակ ըսելու՝ դանկեալն զձեռամբ իւրեանց :

Յարի և այս ի Յաբելնէ դարձեալն . — փոխանակ ըսելու՝ ի դարձեալն ի Յաբելոնէ :

225. Գիտելիք զ. Աախոադրութիւններն այ շատ անդամ ինքիրեն կ'իմացուին առանց կրկնելու, և եթէ նախղիր ունին՝ ան միայն կը կրկնուի . ինչպէս,  
Երկինք և երկիր վասն մարդոյն, և մարդն՝ պատուիրանին . — այսինքն՝ վասն պատուիրանին :

Վայ ի վայի վերայ, և գոյժ ի գուժի . — այսինքն՝ ի գուժի վերայ :

Երթ զհետ արդարութեան, զատուածպաշտութեան, զհաւատոց, զիրոյ . — այսինքն՝ զհետ ատուածպաշտութեան, զհետ հաւատոց, ըզնետ սիրոյ :

## ԳԼՈՒԽԸ

### ԳԻՄՈՐՈՅՑՈՒԹ

#### ԴԱՍ 22.

226. Այս յօդերս ս, թ, ն, գերանուններու ոյժունենալով, առաջուց խօսուած կամ գիտցուած, և կամ ինքնին որոշեալ ու մասնաւորած անուան վայեր դրուին . ինչպէս, անյայտ և անորոշ ծովի վայ խօսելով, կը ըսուի .

Վմենայն ուղիսք ի ծով գնան և ծով ոչ լնու :

Ծայց երբ առաջուց խօսուած կամ գիտցուած ծովին  
վրայ նորէն խօսուի , կ'ըսուի .

Օ թինչ արասցուք քեզ և դադարեսցէ ծովս ի մենջ .

առէք ընկեցէք զիս ի ծովու , և դադարեսցէ ի  
ձենջ ծովու . և առին զինովնան և ընկեցին ի ծո-  
վոն , և դադարեաց ծովն ի խոռվութենէ իւրմէ :

Այնպէս անորոշ ու չմասնաւորած մոքով կ'ըսուի .

Հոգի սուրբ Կյատուծոյ գոյ ի քեզ :

Իսկ որոշեալ ու մասնաւորած մոքով , թէե առաջ չէ  
խօսուեր վրան , կ'ըսուի .

Առուրբ հոգին իմաստութեան փախիցէ ի նենցու-  
թենէ :

Իսկզբանէ էր բան :

227 . Գիտելիք Ա . Շատ անդամ բառի մը վրայ դըր-  
ուելով՝ զօրութեամբ մէջ կը բերէ դերանուն մը , ա-  
նուն մը , մինչև անդամ բայ մը . ինչուես ,

Դերանուն ցուցնող յօդ

Ընկալ զփոքրս ի ակարէս , և շնորհեա զմեծք առ  
ք հզօրէտ . — այսինքն՝ զայս իմ փոքր յինէն ի տկարէ ,  
զայդ քո մեծ ի.քէն ի հզօրէ :

Օ այն կերակուրու . — այսինքն՝ զայն կերակուր քո :

Ոչ այսպէսն . — այսինքն՝ այն որ ոչ այսպէս է :

Որ ընթեռնուն իմիտ առցէ . — այսինքն՝ նա որ ըն-  
թեռնու :

Օ որ դուքն ոչ դիտէք . — այսինքն՝ զայն զոր դուք ոչ  
դիտէք :

Կնոսն ցուցնող յօդ

Եթէ ընդ փայտ դալար զայս առնեն , ընդ չորն  
զինչ լինիցի . — այսինքն՝ ընդ չոր փայտն :

Վյա առակ և դատաւորին . — այսինքն՝ դատաւորի  
առակն :

Քարեաց գործողքն սկսակին , չարեայն՝ ի հուրն ան-  
շէջ մասնին . — այսինքն՝ չարեաց գործողքն :

## Բայ յո-յնող յօդ

Օգործ տեառն գործէ որպէս և ես . — այսինքն՝  
որպէս և ես գործեմ :

Ելեց և արարից որպէս միշտն . — այսինքն՝ որպէս  
միշտ առնելի , արարի :

Օտանելն և զոչն . ի բանալն և յոչն . — այսինքն՝ զոչ  
առնելն , յոչ բանալն :

## ԴԱՍ ԶԵ.

228 . Պիտելք Բ . Ենունի մը յօդը շատ անդամ իր-  
մէ յառաջ դրուած ածականին , յատկացուցին , իբրև  
բացայացիչ դրուած յատուկ անուան , խնդրին ու-  
մակրային վրայ կը դրուի . ինչպէս ,

Եժականին վրայ յօդ

Կորուսեալս հոգւոյ :

Միածինն որդի :

Երկուցն եղարց :

Յիմումն անձին :

Եհաւոր և մեծա արարածոց : Երարչականդ քո հրա-  
մանաց :

## Յատկացուցին վրայ յօդ

Օսրբութեանն օրէնս :

Օինքեանն սպանանէ զիիւսայ :

Օնորունն հաւաստութիւն :

Իբրև բացայացիչ դրուած յափուկ անուան վրայ յօդ

Դկլաթն գետոյ : Օկուաշն աւան :

Դ Ա Յ Ն Ա անապատէ :

Խնդրին վրայ յօդ

Օինչիցէ ի մեռելոցն յառնել . — այսինքն՝ յառնելն  
ի մեռելոց :

Չարն ի չարն գործելոյ առնու զանուն . — այսինքն՝  
ի չար գործելոյն :

Յընկեցիկն առնել զնա . — այսինքն՝ յառնելն ընկե-  
ցիկ :

Վմանութիւն Եստուծոյ է սուրբն և արդարն գոլ  
հանդերձ խոհեմութեամբ , — այսինքն՝ սուրբ  
գոլն և արդար գոլն :

ԱՌԵԲԱՅԻՆ ՀԸՆՅ յօր

ՈՒԽՍԱՆԳԱՄՆ ԳԱԼՍՏԵԱՆ ԴԱՏԱՍՏԱՆ · — այսինքն՝  
միւսանգամ գալստեանն :

Վաղն առնելով . ցանդն հայելով . — այսինքն՝ վաղ  
առնելովն , ցանդ հայելովն :

229 . Գիտելիք գ . Ասանկ սովորաբար յատուկ ա-  
նուններուն նախադաս ածականին կը դրուի յօդը .  
ինչպէս ,

Քաջին շայկայ :

Ո՞ւծի՛ Աստուծոյ :

Արին Վաղարշակ :

Ի մարդասիրէն Աստուծոյ :

Օյլէծէն Աահակայ :

Ո՞ւրոյն շայկայ :

230 . Գիտելիք գ . Երբեմն ալ որ և իցէ անուան  
յօդը՝ ետևի ածականին վրայ կը դրուի , եթզ զատե-  
լով կ'առնուի . ինչպէս ,

Օր Տեառն մեծն և երեւելին :

Օ այս յայտ առնէ Պատիթ մեծն :

Անկաւ Բաբելոն մեծն :

Ուր էր Պաղար մեռեալն :

231 . Գիտելիք Ե . Ըստ անգամ դիմորոշ յօդերուն  
տեղը կը բանին այսը , այդը , անդը մակրայները՝ նախ-  
դրիւ տրականի հետ , ասպի , այսի , անսի բացառականի  
հետ , ասպ , այդը , անդ նախդրով վերջահոլով տրականի  
հետ . որոնք երբեմն այս , այդ , այն ցուցական դերա-  
նուններուն տեղն ալ կը բռնեն . ինչպէս ,

Ի պտղոյ անփի ծառն ճանաչի . — այսինքն՝ ի պտղոյն :

Յաղգէ ասպի խոտորելոյ յայսմանէ :

Ի ժամանակի անդ :

Երթեալ էին ի բաղաք անդը :

Ի ժամէ ասպի յայսմանէ :

Ի ժամանակի ասպ յայսմիկ :

Յանկամելանել ի մարմնոյ ասպի . — այսինքն՝ յայսմ  
մարմնոյ :

Յաշխարհի ասպ . — այսինքն՝ յայսմ աշխարհի :



# ՈՒԳԴԱԿԱՐԱՅԻ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ

Ուղղակարութիւնը խօսքը շխտակ գրելի է : Խօսքը շխտակ հարդարութիւնը բանի մը նշանակեր իան , ոյսինքն :

## Առաջանաւթիւնն նշան

**Շեշտ** (') . որ պարհեցաւ և ձայնը բարձր հանելու նշանն է . բայերուն հրամայականները և ոչ , մակրայենները կը շեշտուին . ինչպէս , Միրեա , քարոք , ոչ ոք . մի մեղանչէք : Կմանապէս անուն մը որ կանշուի , կը շեշտուի . Տէր տէր . Աստուած իմ Աստուած : Բայց ընդհանրապէս կէս հարցականներու և շատ շերկնեալու ձայնարկութեանց վրայ կը դրուի շեշտը . ինչպէս , Օքու ովկես . Երանի թէ . Այ անօրէն . Օ՞ն արիք :

**Երիար** (') . որ կը դրուի ան ձայնարկութեանց ու անուններուն վրայ , ուր որ կիրքին յարմար երկնեալու է ձայնը . Բարէ . Վաշ . Ա՛ն կարի է առանցիլա . Աւաղ բաղդին . Տէր տէր մեր , զի՞ սքանչելի է անուն քո . Զարմաննեք մէծ :

**Պարոյի** (") . որ հարցընելու բառերուն վրայ կը դրուի , Զի՞ . Քանի՞ . Ընդէր . Համեալ իցես . Ա՛չ տեսանես :

## Տըսկութիւնն նշան կամ բառերը ու խօսէլ բաժնելու նշաններ

**Ենթաճայ** (.) . որ տողին ծայրը բառերը բաժնելու կը դործածոի , և երկու զատ զատ վանկ կազմող ձայնառներուն մէկը վարի տողը անցընել պէտք է . ինչպէս , Աի . այն . Առնու . ին . Գործէ . ին . Բաղաձայնը մէկ որ ըլլայ , միշտ վարի տողը դրելու է . շատ որ ըլլայ , մէկը միոյն անդին տառնելու է . ինչպէս . Տա . Եի . Եր . Կիր՝ Համագ . շիմ : Բայց շատ բաղաձայնով բարդած կոմ ածանցած բառ որ ըլլայ , բոլորն ալ մէկտեղ վարի տողը անցընելու է . Կորա . Կշան . Ան . բնական :

**Առավերդ** (') . որ աւելի բանաստեղծները կը բանեցնեն գիր մը յապաւելով . ինչպէս , Ազ՝ եթէ . Ա՝ աւանիկ . Վէմմ' ի գուռն , Քուտունի ըստն ապա եթէ , ևս աւանիկ , վէմմի ի գուռն :

**Բառնի** (') . որ կը դրուի բառի մը վրայ , ուր որ ձայնը խիստ քիչ կանկ առնելու մը պէս պիտի ընէ . որ բառ բառի շխտութեալ . և համառօտ հաստուածներու մէջ ստորակէտի տեղ բութ կը դրուի :

**Ապոբակէպ** (.) . որ կը դրուի . Երբ խօսքի մը կտորը խիստ անկատար է , ու ետեւ բան մը կ'ուղէ , և կ'ըսուի հապած :

**Միջանիկ** (.) . որ կը դրուի լման խօսքի մը եաքը , որ ետեւ ուրիշ կը տոր մն ալ ունի , և կ'ըսուի անդամ :

**Վէրջանիկ** (.) . որ կը դրուի , երբ խօսքը ամբողջ լմացած է , ու պարբէրութիւն կամ պառն կ'ըսուի : Այս չորսին ալ օրինակ ,

Բոլոր մարմնոց՝ հոգի է կենդանութիւն (հապած) , խոկ մարմնոյ և հոգոյ միտք են կառավոր (անդամ) . և որպէս առ մի մարդ (հապած) , ոյսպէս առ բոլոր աշխարհու (առաջերանիւն) :

**Ստորակէտով** կը զատուին կոչական անունները , ու միջակէտով՝ ուրիշն խօսքն որ յառաջ բերենք , որ գլխադրով ալ կ'ըսկուի . ինչպէս :

**Այս** . արքայ քաջ , այդ այդպէս է :

**Ստիպէր** զնոսա և ասէր . Ցաղ դրեմ և ցուցանեմ մէծ թագաւորին :


Պարզ յատուկ անուններն ու պատույ անուններն ալ գլխադրով գրելու է :

Հայկ . Պերճ . Արամ . Ստեփանոս . Մեսրոս . Գրիգորիոս . Պողոս . Կոռանդնեալովիս . Երուսաղէմ . Կորին Վեհափառութիւնը :

**Փակագիծ** կ'ըսուի աս նշանս ալ ( ) , երկայն միջանկեալ բան մը մէջն առնելու զատելու համար : Բայց կարծերը ստորակէտով զատել բաւական է :







H. P. Muller  
to my Superior.  
H. P. Muller



Large dried apricot  
from Muller's  
number 1000  
sent from Muller





